



3. ԴԵՎ ԶԱՄԱՆԻ ՀԵՔՅԱԹԸ

Ժամանակով մեկ թագավոր կար, ուներ հրկու տղա, մեկ տղեն տվեր հր ուսումի, մեկ չհր տվե: Էն ինչ մեծ տղեն հր, ուսում չունեի, քաղաքի մեջ ընկերների հետ կրպրտըտեր, կուտեր, կրխըմեր, քեֆ կաներ ուրան համար: Օրերից մեկ օր ընկեր տղերքն ասեցին, թե՛ թագավորի՛ տղա, որ Վերան բաղին չինես քաղաք, շատ լավ գըլնի: Էն տղան էկավ հորից փող ուզեց, թե՛ փո՛ղ տուր, Վերան բաղին պիտի չինես քաղաք: Թագավորը շատ փող տվեց, գնաց Վերան բաղին չինեց քաղաք: Որ չինեց պրծավ, մեկ գիշերվա մեջ տեսավ, որ քաղաքը խարաբ էլավ, միլիոնաչափ փողեր գնաց կորուսավ: Էն ընկեր տղերքն ասեցին, թե՛ գնա թագավորեն փո՛ղ ուզա, դոչո՛ւն ուզա, էթանք Ջինմաչինա թագավորի ախչիկ բերենք քեզի համար:

Թագավորը կամք չարավ, փող չըտվեց: Թագավորի պզտի տղեն հիմացավ իրան ախպոր արարքը, դարձավ ուրան վարժապետին խնդրվավ. «Իրավո՛ւնք տուր, էթամ մոտ իմ թագավոր»: Վարժապետ իրավունք տվեց, ասավ՝ գնա՛:

Պզտիկ տղեն գնաց մոտ թագավոր: Թագավորի ընդունակ տղեն հր, շատ ուրխըցավ:

—Որդի՛ ջան, ինչի՞ համար ես էկե:

Ասավ.—Թագավո՛ր, կըխնդրվեմ, փո՛ղ տուր, էթամ Վերան բաղին չինեմ քաղաք:

Թագավորն ասավ, թե՛ ջոջ ախպորդ փող տվեցի, տարավ փչացուց, քեզի հուսումի եմ տվե, դու հասկըցող ես, Վերան բաղին քաղաք չիլնի:

Խնդրվավ, ասավ.—Տո՛ւր:

Թագավորը տղի խաթրեն չելավ, տվեց: Գնաց, սկսեց չինել:

Տղեն գնաց ուրան վարժապետի կուչտը: Վարժապետը հարցմունք արավ, թե՛ ինչի՞ գնացիր թագավորի կուչտ:

Տղեն ասավ.—Փող առա, Վերան բաղին չինեմ քաղաք:

Վարժապետն ասավ, թե՛ Վերան բաղին քաղաք չելնի:

—Ընի-չընի, ահագին փող իմ ախպերը փչացուց, չեմ թողե կորուսի:

Վարժապետն ասավ, թե. — Տղա', եփ որ կը պատրաստես, արի' մոտ ընձի, ես քե բան կըսորվեցընեմ:

Որ քաղաքը պատրաստեց, էկավ մոտ վարժապետ, ասավ. — Վարժապե'տ, քաղաք պատրաստեցի:

Վարժապետն ասավ, թե՝ գնա քաղաքի չորս կողմը ահագին, մեծ խանդա'կ արա:

Տղան գնաց, ֆայլա բռնեց, վարժապետի խոսքը կատարեց: Գնաց մոտ վար-ժապետ, վարժապետն ասավ, թե՝ գնա տաս-տասներհինգ աղչիկ, տաս-տասներհինգ էլ տղա ժողվա', մեկ քանի ձեռք էլ նաղարա-զուռնա, արաղ, գինի, խաց, կերակուլ տա'ր գնա' էն քու Վերան բաղի քաղաքը, խա'ն էն բանձր օթախներու մեջ, թո' նաղարեն զարկեն, հաց ուտեն, ուրանց համար խաղան: Չը-թողես քնեն, չուր լուս խաղցըրո'ւ: Սեյրի ձի կա ծովերի մեջ, էն ձի-անքն են, կուզան Վերան բաղին կըքանդեն: Աղոթրան բացվելուն պես էն ձիանք կըգան, մուղա'թ կաց, նաղարա-զուռնեն էն վախ-տը հաստատ տո'ւր զարնել: էն ձիանքը որ նաղարի ձենն առան, կըփախնեն կեթան, քու քաղաք կըմնա սալամաթ:

Թագավորի տղեն գնաց, վարժապետի խոսքը կատարեց, ձի-անքն էկան, նաղարա-զուռնի ձենն առան, փախան գնացին: Մեկ խատ քուռակ մնաց էն խանդակի մեջ: Լուս բացվավ, Թագավորի տղեն հելավ տեսավ, որ էտ քուռակն մեջ խանդրկին ա: Գնաց, վարժապետին ասավ. «Մեկ քուռակ էն ձիանքից մացե մըջ խան-դրկին»:

Վարժապետն ասավ. — Գնա բե'ր, տո'ւր պախ: Քեզի պետք կուզա:

Թագավորի տղեն գնաց, բերեց, տվեց պախ:

Մեկ ժամանակ մնաց, տղեն գնաց ուր ուսումին էլման: էն մե օր Թագավորի տղեն, վարժապետ խըտ իրար կըխոսին: Վարժապետ ծըծղաց:

Թագավորի տղեն ասավ. — Վարժապե'տ, ինչի՞ ծըծղացիր:

Վարժապետն ասավ՝ ըսկի':

— Ձէ', իմ խոսքի վրեն ծըծղացիր, վարժապե'տ:

Վարժապետն ասավ. — Ձէ', քու լեզվի վրեն չըծըծղացի: Քու ջոջ ախպեր գացե Թագավորի յախեն կտրե՝ փո'ղ տուր, ղո'չուն տուր ընձի, էթամ Ձինմաչինա Թագավորի աղչիկ բերեմ ընձի խամար: Թագավոր կամք չանա, փող չի տա:

Պղտի տղեն վարժապետին խնդրվավ. — Թող էթամ մոտ թա-գավոր:

Վարժապետ թողեց: Գնաց մոտ թագավոր: Թագավոր ուրխը-
ցավ ուր տղի գալը, ասավ թե ինչի՞ ես էկե, ի՞նչ կասես:

—Թագավո՛ր, մե բան եմ լսե, իմ ախպեր փող կուզա չես իտա,
կըխնդրվեմ, տո՛ւր:

Թագավորն ասավ, թե՝ կըտանա, կըփչացնա:

—Բան չըկա, թագավո՛ր, խո չի խըլըսի: Ես կաշխատեմ էն պա-
կասորդ կըբերեմ:

Թագավորն տղի խնդիրքը չըմերժեց, տվեց: Փող տվեց, դոշուն
տվեց, տղեն գնաց: Գնաց թըխ Ձինմաչին: Պզտի ախպերն դարձավ
գնաց վարժապետի կուշտ:

Վարժապետ խարցուց, ասավ.—Ինչի՞ գացիր թագավորի
կուշտ:

Տղեն ասավ.—Գացի փող ուզի, տվեց իմ ջոջ ախպոր, գնաց
Ձինմաչինա թագավորի աղչիկ բերա:

—Ձրկանա բերա. գինքն էլ կըփչանա, ուր դոշունն էլ:

—Ընչի՞, վարժապե՛տ:

—Ձորս բոլոր խանդակ ա, չըկանա էրթա մոտ թագավորի ախ-
չիկ: Մեկ ամսվա ճամբախ ա:

Ախպոր սիրտ մոմռաց:

Ասավ.—Վարժապե՛տ, ես էլ կէթամ:

Վարժապետ չըթողեց: Տղեն լացավ:

Վարժապետն ասավ.—Մի՛ լաց, կըթողեմ կէթաս: Մա՛ց, թող
Հինգ-վեց օր ընցնի, խըտ իրար էթանք:

—Էլ չենք կանա խասնի:

—Ընտոնք մի ամիս էրթան, մենք մի օր կէրթանք կըՀասնինք,
իմ ձին քամուց ա, քու ձին էլ խրեղեն ա:

Մնացին չուր տասներՀինգ օր, վարժապետն ասավ.—Թագավո-
րի՛ տղա, գնա քու ձին Հեծի՛, արի՛:

Գնաց էն ծովի խրեղեն ձին խեծավ, գնաց վարժապետի կուշտ:
Վարժապետն էլ ուր քամու ձին Հեծավ, գնացին թըխ Ձինմաչին:
Մե օր գնացին, խասան տասներՀինգ օրվա ճամբախ: Գացին տե-
սան, թագավորի տղեն, ուր դոշուն, բոլոր լցված խանդակ, չեն կա-
նա դուս Հըլե: Անոթի, ծարավ մացած դատ:

Ջոջ ախպերն պզտի ախպորը տեսավ, ուրխըցավ.—Իմ ախպերն
էկավ, խասավ ընձի: Ախպե՛ր ջան, մե իլլա՛ճ արա մեղի: Ըստուց
չենք կանա դուս ըլնե, կըմեռնենք:

Թագավորի պզտի տղեն վարժապետին ասավ, թե՝ ի՞նչ անենք:

Վարժապետն ասավ.—Թագավորի՛ տղա, ես չեմ կանա էս
խանդակը Հընցընե, քո ձին խրեղեն ա, դու կըՀընցընես: Իմ ձին
քամուց ա, ես էլ գըլնեմ խանդակ: Խունար կըմնա քեզի: ԿըՀընցը-

նես կէթաս թագավորի աղչկա կուշտ, մի՛ վախեցի, Հերսոտ խոսի, ես դաս եմ:

Տղեն հընցավ, վարժապետն էլ հընկավ խանդակ:

Թագավորի տղեն գնաց մոտ ավաչիկ, ասավ.—Աղչկան ասե՛ք, գա դուս:

Գնացին ասին.—Թագավորի՛ աղչիկ, մեկ տղա էկեր ա, քեզի կըղանչա:

Թագավորի ավաչիկ հելավ դուս, տեսավ, որ մե տղա ձիան վրեն նստուկ ա:

—Ի՞նչ կասես, տղա՛:

Տղեն ասավ, թե՛ արի էթանք: Ես էկեր եմ քեզի առնելու:

—Քեզ չեմ առնե:

—Ինչի՞, ինձեն լա՞վ տղի պտի առնես:

—Հըպա դու ի՞նչ ես, ի՞նչ տղա ես որ, եսիմ Հա՞յ ես, թո՞ւրք ես:

—Ես Հայ եմ, լավ տղա եմ:

—Էտ խանդակը իմա՞լ հընցար էկար:

—Իմ ձին խրեղեն ա, որ ուզենամ, մկա քաղաքը կըջարդեմ: Արի խեծի՛ իմ ձիան թարք, էթանք:

Աղչիկն ասավ.—Էյ, տղա՛, կտոր-կտոր մի՛ էլի, ես Ձինմաչինա թագավորի աղչիկն եմ, մկա որ Հայ տամ, դոշուն քեզի կըջարդի:

—Դու չե՞ս խասկընա, որ էս ձին խեծնող, էտ խանդակ հընցը-նող դոշուն չըկանա վրեն:

—Թագավորի տղեն էկեր ա, ընձի կառնի, կասես թե Դե Զա-մանի անկըճի ուլինքը բերե ընձի նշան:

Տղեն ասավ.—Դե Զամանի անկըճի ուլինքը վե՞ր տեղն ա:

Ետ դարձավ էկավ ուր վարժապետի կուշտ:

Վարժապետն ասավ.—Թագավորի՛ տղա, ի՞նչ արիր:

—Ախչիկն էսենց ասավ ընձի, վարժապե՛տ: Գնա Դե Զամանի անկըճի ուլինքը բե՛ր ինձի նշան, որ ես քեզի առնեմ:

Վարժապետն ասավ.—Թագավորի տղա, չեմ կանա ես խետ քեզի գա: Ես որ խետ քեզի գի, քո բան խանգիստ կըլնեք, գնա քու բան Աստված Հաջողա՛: Աղչկա՞ն ասա, մեզի թո՛ղ պախա, չըփչա-նանք:

Թագավորի տղեն ետ դարձավ գնաց մոտ աղչիկ, աղչկան ասավ.—Թագավորի՛ աղչիկ, իմ խետի դոշուն հըմեն թափած քու խանդակ, ես կէթամ Դե Զամանի անկըճի ուլընքի, իմ դոշուն լավ կըպախես, որ ետ դարցի, էկա տեսա՛ իմ դոշուն լավ չես պախե՛ իմ կոփի կոփի ա:

Թագավորի աղչիկ թագավորի տղին ասավ.—Թագավորի՛ տղա, էսենց պախեմ, վարդ փողմիչ չըլնի:

Թագավորի տղենն ասավ. — Է՛, մնացի՛ր բարով, ես գնացի, քառսուն օրեն ետ էկա՛՝ էկա, չէկա՛՝ չէկա, ինչ գինաս, է՛ն արա:

Թագավորի տղենն ձին քչեց գնաց: Գնաց ընկավ մե ամայի տեղ, գնաց մեկ քոչկ-սարի պատահավ, տեսավ, որ մեկ աղչիկ էտ քոչկ-սարի մեջն ա, խարցուց Թագավորի տղենն. «Ախչի՛, դու ի՞նչ աղչիկ ես»:

— Տղա՛, ես Սիվտակ դեի կնիկն եմ, դու իմա՞լ էկար էստեղ, էսի Սիվտակ դեի խոզն ա, էն Սիվտակ դե քեզի չըտեսա՞վ:

— Չէ՛, չըտեսավ:

— Դե արի՛, քեզի պատվեմ, հելի գնա՛, քանի Սիվտակ դե չէ էկե, որ էկավ, քեզի կըսպանի, ափսոս ես:

— Չէ՛, չէ՛, ախչի՛, մի՛ վախեցի, էն Սիվտակ դե չըկանա վըր ընձի:

Ձիուց իջավ էտ սարայի հավուզի վրեն նստավ: Սիվտակ դեն էկավ:

էկավ ասավ. «Ոնողածի՛ն, դու էստեղրանք ի՞նչ կըպըտըտես: Կըովենք»:

— Կովենք:

Հելան կովան: Թագավորի տղենն դեին հաղթեց, ըսպանեց: Գիչերը մնաց էտտեղ ղոնախ, առավոտ հելավ, ուր ձին խեծավ գնաց:

Աղչիկն ասավ. «Թագավորի՛ տղա, դո՞ր կէթաս»:

Թե՛ ինձի մուրազ ունեմ, մուրազիս կէթամ:

— Քու մուրազն ինձի չե՞ս ասե:

— Կասեմ: Կէթամ Դե Զամանի անկընճի ուլունքին:

— Վա՛յ, քու ղըկողի վիզը կոտրի, շատ ղոռն է, չես կանա բերի, ափսոս ես, մի՛ գնա: Դե Զամանի անկընճի ուլինք ուզողը ընձնե շա՞տ լավ ա:

— Չէ՛, ախչի՛, ուխտ եմ արե, պետք է բերեմ:

Գընաց հընցավ Սե դեի խող: Գնաց տեսավ մեկ սարայ ի, մեկ աղչիկ էլ էտ տեղ կայնուկ ա:

— Ոնողածի՛ն, ընչի՞ ես էկե, — ասաց աղչիկը:

— Էկեր եմ, էթամ Դե Զամանի անկընճի ուլինքին:

— Ապա էն Սիվտակ դե քեզ չըտեսա՞վ:

— Տեսավ, աղչի՛կ, ըսպանեցի:

— Շա՛տ լավ արեցիր, տղա՛ ջան, էն իմ քվոր մարդն էր: Արի քեզ պախեմ, Սե դե չիգա քեզի տենա, ափսոս ես, քեզի կըսպանա:

— Չէ՛, ախչի՛, մի՛ վախեցի, Սե դեը ղուրպան կանեմ քեզի:

Սե դեն էկավ, տեսավ, որ մեկ կտրիչ տղա կայնուկ ա ուրան սարայի հավուզի վրեն: Բարե տվեց, ձեռ կապեց, կայնավ. «Հա՛, Թագավորի՛ տղա, ինչի՞ ես էկե»:

Թագավորի տղեն ասավ.—Էկեր եմ, կէթամ Դե Զամանի անկը-
ճի ուլնքին: Դե՛ ախպեր, ինձի ընկերութեն չե՞ս կանա անե:

—Չէ՛, Թագավորի՛ տղա, Զանփուլատի խող չեմ կանա անցնե:
Քեզի կրտանեմ չուր Զանփուլատի Հողի բերան, ու ես կըղառնամ:
Եփ որ դու Զանփուլատին հաղտեցիր, էն վախտ ես քու կուչտ կայ-
նուկ եմ:

Մնացին առավոտ, Սև դե տարավ Թագավորի տղեն ճամփեց:

Թագավորի տղեն գնաց Զանփուլատի սարայի կուչտը: Զան-
փուլատի կնիկ որ տեսավ Թագավորի տղեն, վա՛յ ափսոս, ըսավ,
ինչի՞ր էկար: Զանփուլատ մկա կուգա քեզ կըսպանա:

—Չէ՛, աղչի՛կ, մի՛ վախեցի:

—Ինչի՞ր պիտի չըվախենամ. ո՛չ ընտրան թուր կըկտրա, ո՛չ էլ
գյուրզ քյար կանա, էրկաթից ջան ունի:

—Մի՛ վախեցի, աղչի՛կ, Աստված ողորմած ա:

Թագավորի տղի ձին էլավ լեզու, խոսաց, ասավ, թե՛ տղա՛, էտ
աղչիկից խարցո՛ւ, թե Զանփուլատի խոզին ո՞ր տեղն ա:

Աղչիկն ասավ.—Մըջ դուլթուն ա, իրեք հատ ճընճղուկ ա:

Ձին ասավ.—Թագավորի՛ տղա, Զանփուլատ որ կուգա, կա-
սա՛ կովենք: Մի՛ վախեցի, ասա՛՝ արի կովենք: Որ կասա՛ գյուլաչ
բռնենք, դու ասա՛՝ չէ՛, ձիանք խեծենք, կրովենք, էնիկ կըխեծնի
ուր ձին, դու էլ կըխեծնես ընձի, էնի կասա, թե՛ գյու՛րզ քցի: Քու
գյուրզ ընտուր չի հաղտա: Որ էնի գյուրզ քցեց, ես հավալամիչ կըլ-
նեմ, քեզի ընձի վրա դայի՛մ պախիր:

Թագավորի տղեն ասավ, թե՛ չա՛տ լավ կըլնի:

Զանփուլատն էկավ, ասավ.—Հը, հողածի՛ն, ի՞նչ մարդ ես:
Թարպիրդ տե՛ս, կովենք:

—Կովենք:

—Գյուլաչ կանենք:

—Չէ՛, Զանփուլա՛տ ախպեր, ձիով կովենք:

Խեծան ձիանք, ըսկսեցին կըովել. Զանփուլատն ասավ.—Հո-
ղածի՛ն, գյուրզդ քցի՛»:

Թագավորի տղեն ուրան գյուրզ քցեց, մե բան չելավ Զանփու-
լատին:

Զանփուլատն ասավ.—Թագավորի՛ տղա, դայի՛մ պախա քեզի,
իմ գյուրզն էկավ:

Գյուրզը քցեց Զանփուլատ, Թագավորի տղի ձին հավալամիչ
էլավ, Զանփուլատի գյուրզն գնաց առավ ուրան բաղանը չըջեց:
Զանփուլատն իշկաց, տեսավ, որ Թագավորի տղեն հելե երկինք,
աչքը բռնեց Թագավորի տղին կիչկեր, ձինը հեծավ, Թափքով գար-
կեց Զանփուլատի ճակտի մեջ, Զանփուլատի խելք գնաց, ընկավ:

Թագավորի տղենն ձիուց իջավ, գնաց ճնճուղները մորթեց, Զանփու-
լատը մեռավ: Սև դեւը էկավ հասավ, գնացին Դև Զամանի հողը:
Տեսան, որ Դև Զամանի ղոշուն, Դև Զաման, չոպաններ, օշխարներ,
բոլորը, ինչ անասուններ կա, քնուկ են, տասնըհինգ օր պըտի քնեն:

Սև դև Թագավորի տղին ասավ.—Թագավորի՛ տղա, էս ինչ լավ
էլավ:

Գնացին, ըսկի մարդ խապար չելավ, քընուկ ին հըմեն:

Գնացին Դև Զամանի օթախը, Սև դևն ասավ Թագավորի տղին.
«Այսիկ Դև Զաման ա, ըսպանա՛, անկըճի ուլինք հանենք տանենք»:

Թագավորի տղեն ասավ.—Սև՛ դև, չեմ ըսպանե, քնուկ ա, մու-
խանաթութեն կըլնի, քնուց խանենք վեր, ղուվաթներս հաղթեց՝
ըսպանենք:

Ինչքան բոռացին, չիմացավ. էրկաթը տաքացըրեցին, տարան
ձխտին ոտներին, էրեցավ, որ հիմցավ. հիմցավ հելան կովան: Թա-
գավորի տղեն Դև Զամանին ըսպանեց: Անկըճի ուլինքը խանեցին:
Դև Զամանի կնկան ասեցին. «Դև Զամանը ըսպանինք»:

Կնիկն ասավ.—Թագավորի՛ տղա, արի՛ քեզի պախեմ, ուր է,
ուր չէ, դեւերը կուգան քեզի վնաս կուտան:

Թագավորի տղեն ուզի էղավ, Դև Զամանի կնիկ էնոր պախեց,
հելավ հերտիկ պոռաց. «Դեւեր, արե՛ք, Դև Զամանին ըսպանած
ա»: Դարձավ էկավ, Դև Զամանի քուրքն դրեց տղի կուշտ, ասավ,
թե. «Տղա՛, դեւեր կուգան, խըտ ընձի դավի կանեն, կասեն, թե՛ դու
խողաճին իր, մեր Թագավորին տվիր ըսպանել, ես կասեմ՝ չէ՛, ես
խապար չեմ: Շահ Ղարապյոզ որ գուգա, ես քեզի նշանց կուտամ,
էս քուրքը կըքցես ընտրա թևերի վրեն, էնի գըլի Թագավոր, էլ քե-
զի բան չեն ասե»:

Դևերն էկան, Դև Զամանի կնկա հետ կոխվ կանեն, Ղարա-
պյոզ շահ Դև Զամանի վազիրն էր, հառաջացավ, դավի կաներ: Դև
Զամանի կնիկ նշանց տվեց Թագավորի տղին: Թագավորի տղեն
քուրքը վերուց քցեց Ղարապյոզ շահի թևերուն, հելավ Թագավոր:
Բոլոր դևերն էկան գըլոխ իջեցուցին, թե՛ էս մեզի Թագավոր: Դև
Զամանի կնիկն խընդրվեց Թագա Թագավորին. «Խմ խասյաթ, ձեր
մեկ չէ, Թագավո՛ր, ես խողաճին եմ, դուք՝ վայրենի, ինձի բա՛ց թող,
ես էթամ»: Բերին Մալաքի դեւ տվեցին Դև Զամանի կնկան, ահա-
գին մալ-դովլաթ, ապրուստ տվեցին, Մալաքի դև չըլկեց, Թագա-
վորի տղեն էլ խետ, միասին էկան: Զանփուլատի կնիկն էլ վերցին,
Սև դևու կնիկն էլ վերցին, Սիվտակ դևի կնիկն էլ վերցին, էկան
հելան Զինմաչինա քաղաք:

Էտ Թագավորի տղեն ուրան Մալաք դեւը թողեց քաղքի դրաղ,
ձին խեծավ, գնաց մոտ Զինմաչինա Թագավորի աղչիկ:

—էկա, ախչի', իմ դոշուն լավ պահե՞ր ես:

—Հա', թագավորի' տղա, իմ ուզածս բերե՞ր ես:

—Բերեր եմ, ախչի':

—էթամ իմ դոշուն տենամ:

Թագավորի տղեն գնաց ուր դոշունի մոտը, վարժապետ, ուրան ախպեր շատ ուրախացան:

—Բարով տեսանք քեզի, թագավորի' տղա: Սաղ-սալամաթ էկե՞ր ես, ուրախութենով:

—Հա', վարժապե՛տ, շնորհակալ եմ քեզնից, քու տված ուսու-մը ինձի պրծուց: Թագավորի աղչիկ ձեզի լավ պահե՞ց, նեղություն չըտվե՞ց:

—Հա', թագավորի' տղա, շատ լավ պահեց մեզի:

—Դե մացե՛ք էտտեղ, ես էթամ թագավորի աղչկա կուշտը, ասեմ, գա ձեզի հանա:

Գնաց թագավորի աղչկա կուշտը:

Թագավորի ախչկան ասավ. «Իմ դոշուն էնտեղից խա՛ն, քու ուզածը տամ»:

Թագավորի աղչիկն ուրան մատնիքն օլորեց, քաղաքի բոլորի խանդակը դգվավ, թագավորի տղի դոշուն հելավ դուս: Մեկ ժա-մանակ մնացին էտտեղ: Դե Զամանի անկրճի ուլինք տվեց թագա-վորի աղչկան, նշանեց ուրին հարս: Էլավ ուրեն դոշունը, թագա-վորի աղչիկը, նաղարով, գուռնով, խաղ-խառնիսով, Մալաքի դեն էլ խետ, էկավ թըխ ուր խոր քաղաք: Էկավ խասավ Վերան բաղի քաղաքը: Բերեց ուրան ջոջ ախպեր պատրաստեց թագավոր: Չին-մաչինա թագավորի աղչիկը տարավ պսակեց ուր ախպոր վրեն:

Չինմաչինա թագավորի ախչիկ ասավ.—Թագավորի' տղա, հը-պա ընձի ի՞նչի խաբեցիր:

—Ես քեզ ե՞փ խաբի, թագավորի' աղչիկ:

—Ապա կասիր՝ կըտանեմ ինձի խամար:

—Ձէ', ինձի խամար չէ, իմ ջոջ ախպոր խամար է: Ես քեզի հարս եմ ասե, որ պսակվես ընձի վրա, շատ մեղք կըլնի. մեր կանոն չի սիրա:

Բերեց պսակեց ուր ախպոր վրա: Դե Զամանի կնիկն էլ զինքն առավ: Վերան բաղին շինեց ահագին քաղաք: Մեկ ժամանակ մնաց, թագավորը մեռավ, թագավորի պղտիկ տղեն դրեցին թա-գավոր: Էն մարդեր խասան ուրանց մուրազին, մենք էլ խասենք մեր մուրազին: